



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԳԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

ԹՈՐԳՈՄ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Առաջնորդ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016



MURRAY HILL 6-0710

Archbishop Torcom Manougian, Primate

Քիւ 21610

Փետրուար 24, 1969

Արժանաշնորհ
Տ. Բարզէն Ա. Բնյ. Մագուռեան
Հովիւ Ս. Երրորդութիւն Հայց. Եկեղեցւոյ
եւ Սախազահ Ժիական Խորհուրդի
Քէյմպրիժ.

Սիրելի Տէր Բարզէն,

Ստացած ենք 1969 Փետրուար 5 թուակիր 2եր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ 2եր նախագահութեամբ՝ Յունուար 26ին զուսարուած 2եր Ժիական Ժողովին մէջ կատարուած Եկեղեցական Խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնագիրը:

Սկսածի ունենալով որ 2եր Ժիական Ժողովը տեղի ունեցած է Թեմական Ամենազորութեան տրամադրութեան համաձայն, այսու կը վաւերացնենք Ժիական Խորհուրդի անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Համեցէք փութով Առաջնորդարան զրկել Ժիական Խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց եւ Եկեղեցւոյն ենթակայ մարմիններու ատենապետներու անունը, հասցէն եւ հեռաձայնի թիւը:

Օրհնելով Ժիական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք 2եզի եւ 2եր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն ՍՔԼԸՔ Եկեղեցւոյն եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐԲԵՊԻՍԿՈՊՈՍ

Առաջնորդ

Տիարք՝ Արշի Խուլիկեան
Փիթըր Սիւլիսեան
Արամ Տիրանեան
Արթըր Արզարեան
Տիրան Ժաղիկեան
Արթըր Մամարեան